ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 3/8

քսանը ապրիլի 2012 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻՆ ԿԻՑ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության համար միգրացիայի խնդրի հրատապությամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել երևույթի ուսումնասիրությունը դնել գիտական հիմքերի վրա, նկատի ունենալով, որ ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետը միգրացիայի ուսումնասիրության բնագավառում ունի տասնյակ տարիների փորձ և մասնագիտացված գիտական ներուժ, ինչի վկայությունն է ֆակուլտետի մասնագետների մասնակցությունը միգրացիայի վերաբերյալ միջազգային գիտական նախագծերին և այդ բնագավառում հրատարակած աշխատությունները (այդ թվում նաև արտերկրում),

ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. Ստեղծել ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետին կից միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ